

DOI: 10.59560/18291155-2025.1-263



ՆԱԻՐԱ ՇԱՀԻՆՅԱՆ

*ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի
քննչական հինգերորդ
վարչության քննիչ,
արդարադատության երրորդ
դասի խորհրդական,
իրավագիտության մագիստրոս*

**ԾԱՆՐ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՊԵՍ ԾԱՆՐ
ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԱԾ ԱՆՁԻՆՔ ԿԱՐՈՂ
ԵՆ ԱԶԱՏՎԵԼ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ
ԳՈՐԾՈՒՆ ԶՂՋԱԼՈՒ ՀԻՄՔՈՎ
ԱՀԱՍԱՐՍՈՒՌ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԹԵ՛
ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ԽՈՐՈՒԹՅՈՒՆ**

Ամփոփագիր

Հոդվածը նվիրված է «գործուն զղջալու» հիմքով անձանց պատասխանատվությունից ազատելու կարգավորումների ուսումնասիրությանը:

Նկատի ունենալով, որ 12.07.23 ՀՕ-273-Ն օրենքով ՀՀ քրեական օրենսգրքի 81-րդ հոդվածը լրացվել է 1.1-ին մասով, որի համաձայն գործուն զղջալու հիմքով պատասխանատվությունից կարող են ազատվել նաև ծանր և առանձնապես ծանր հանցագործություն կատարած անձինք, ինստիտուտը դարձվել է ուսումնասիրության առարկա զղջման իրավական, հոգևոր և հոգեբանական ասպեկտներում:

Հոդվածում բացահայտվել է Ֆալսիֆիկացման սկզբունքի էությունը՝ որպես զղջման իրական լինելը հավաստող մեթոդաբանություն: Առանձնացվել են զղջման և համագործակցության պարադիգմաները՝ որպես ոչ մեծ և միջին ծանրության ու ծանր և առանձնապես ծանր հանցանքներում զղջման գործուն լինելը հավաստող մոդելներ: Առանձնահատուկ ուշադրության են արժանացել զղջման հոգևոր և հոգեբանական ասպեկտները: Գիտական հետազոտությունների ուսումնասիրությամբ փորձ է կատարվել ցույց տալ, որ ՀՀ քրեական օրենսգրքի 81-րդ հոդվածի 1.2 հոդվածը անհրաժեշտ է լրացնել մի շարք հանցատեսակներով, ինչպիսիք են սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության, երեխաների թրաֆիքինգի վերաբերյալ հանցանքները:

ՍԱՀՄԱՆԱՐԴՐԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ 1(118)2025

Հիմնաբառեր. գործուն զղջալ, ֆալսֆիկացիայի սկզբունք, զղջման պարադիգմա, համագործակցության պարադիգմա, ապրումակցում:

Գովաբանվեց և անառակ որդին, զի չեղավ ինձ պես անդարձ ուխտագնաց.
Օրհնաբանվեց և ավազակն՝ իբրև անհավատների ոսոխ, ամբաստան.
Պոռնիկ կինն անգամ պատիվ ստացավ՝ որպես նախամայր զղջացողների:
Գրիգոր Նարեկացի¹

Եթե որևէ մեկն անարգվի իր որդու կողմից և կամ թե այլ անօրենություն գործեն որդիները օտարների առաջ, օրենքները անարգանքների համար հրաման են տալիս, որ հայրն իշխանություն ունի իր որդուն տանել դատավորների առաջ: Եվ, եթե որդին հանձն առնի իր մեղքերը և խոստանա, որ այլևս նման բան չի անի, ապա խրատեն նրան ու արձակեն:

Մխիթար գոշ²

Ներածություն: Հետազոտությունը նվիրված է ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 81-րդ հոդվածում տեղ գտած փոփոխություններին: 12.07.23 ՀՕ-273-Ն օրենքով ՀՀ քրեական օրենսգրքի 81-րդ հոդվածը լրացվել է 1.1-ին մասով, համաձայն որի գործուն զղջալու հիմքով պատասխանատվությունից կարող են ազատվել նաև ծանր և առանձնապես ծանր հանցանքներ կատարած անձինք: Նկատի ունենալով, որ ծանր և առանձնապես ծանր հանցանքներ կատարած անձանց գործուն զղջալու հիմքով պատասխանատվությունից ազատելու իրավակիրառ մշակույթ ՀՀ-ում չի ձևավորվել, իսկ զղջման շարժառիթները տարբեր են և օրենքի միատեսակ կիրառության ապահովման իրավակիրառ մշակույթը ոչ միայն խնդրի լուծում չէ, այլև խիստ անցանկալի է նման մոտեցում կիրառելը, սույն հետազոտությամբ առաջ ենք քաշում ինստիտուտի կիրառման որոշակի մեթոդաբանություն: Օրենսգրքի 81-րդ հոդվածի 1.2 մասով նախատեսվել են այն հանցատեսակները, որոնց վրա չի տարածվում գործուն զղջալու հիմքով պատասխանատվությունից ազատելու իրավակարգավորումը: Հոդվածի շրջանակներում հետազոտվել են առանձին տեսակների հանցանքների կատարման շարժառիթները և հոգեբանական ասպեկտը, որոնք ցույց են տալիս, որ 81-րդ հոդվածի 1.2 մասը թերի է, քանի որ ներառված չեն այնպիսի հանցատեսակներ, ինչպիսիք են երեխաների և անօգնական վիճակում գտնվող անձանց շահագործումը, սեռական ազատության և անձեռնմխելիության դեմ ուղղված հանցանքները: Նման բացերը կարող են հանգեցնել իրավակիրառի կողմից երկու հնարավոր ծայրահեղությունների դիմելուն. կա՛մ խուսափել հատկապես ծանր և

¹ Գ. Նարեկացի, «Մատյան ողբերգության»: «ՄՀՄ գրատուն» հրատ., Եր., 2020 թ., էջ 35:

² Մ. Գոշ, «Դատաստանագիրք»: Եր., 2001 թ., էջ 70:

առանձնապես ծանր հանցագործությունների դեպքում գործուն զղջալու հիմքով անձանց պատասխանատվությունից ազատելուց, կա՛մ օրենսդրական արգելքի բացակայության պայմաններում այն կիրառել անարգել՝ ընդհուպ երեխաների շահագործման դեպքերով, որպիսի մտահոգությունն էլ պայմանավորում է սույն հետազոտության արդիականությունը:

Հոդվածում քննարկված հաջորդ իրավական հարցը հետևյալն է. եթե անձը չի վիճարկում իրեն մեղսագրվող արարքը, սակայն համաձայն չէ շարժառիթի կամ դիտավորության ձևի հետ, կարո՞ղ է քննարկվել գործուն զղջալու ինստիտուտի կիրառման հարցը:

Բուն հոդված

Ի՞նչ է իրենից ներկայացնում գործուն զղջալը՝ անձի հոգևոր և հոգեբանական փոփոխություն, որի պարզևատրումը պատասխանատվությունից ազատելն է, թե՛ համագործակցություն, որի նպատակը իրավապահ մարմինների ծանրաբեռնվածությունը թթափելն է: Սույն հետազոտության առարկան այս հարցադրման պատասխանի որոնումն է իրավակիրառ պրակտիկայում, հոգեբանական և հոգևոր հարթություններում:

Համաձայն Օրենսգրքի 81-րդ հոդվածի 1-ն մասի՝ «Եթե անձն առաջին անգամ է հանցանք կատարել, ապա կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե նրա կատարած արարքը ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք է և նա համագործակցում է քրեական հետապնդման մարմինների հետ, չի վիճարկում իրեն մեղսագրվող արարքը, վնաս պատճառած լինելու դեպքում հատուցել կամ այլ կերպ հարթել է հանցագործությամբ պատճառված վնասը»:

12.07.23 ՀՕ-273-Ն օրենքով Օրենսգրքի 81-րդ հոդվածը լրացվել է 1.1-ին մասով, հետևյալ բովանդակությամբ՝ «Եթե անձի առաջին անգամ կատարած հանցանքը ծանր կամ առանձնապես ծանր հանցանք է, ապա հանցավորի դերի, հանցանքը կատարելիս կամ դրանից հետո նրա վարքագծի և այլ հանգամանքների հետ կապված բացառիկ գործոնների առկայության դեպքում նա կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե համագործակցում է քրեական հետապնդման մարմինների հետ, չի վիճարկում իրեն մեղսագրվող արարքը, վնաս պատճառած լինելու դեպքում հատուցել կամ այլ կերպ հարթել է հանցագործությամբ պատճառված վնասը: Բացառիկ կարող են ճանաչվել ինչպես առանձին մեղմացնող հանգամանքները, այնպես էլ այդ հանգամանքների համակցությունը»:

Ի՞նչը ստիպեց օրենսդիր մարմինն գնալ այս ճանապարհով:

Ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների վերաբերությամբ գործուն զղջալու ինստիտուտի կիրառման օրենսդրական փոփոխության նախագիծը հիմնավորվել է այսպես. «Նկատենք, որ նախաքննական մարմինների առկա ծանրաբեռնվածության պայմաններում խիստ կարևոր է

Նման իրավակարգավորումը, որն էապես նվազեցնում է ինչպես նախաքննական մարմինների, այնպես էլ դատարանների ծանրաբեռնվածությունը: Նման պայմաններում հարց է առաջանում. իսկ ինչու նույն իրավակարգավորումները բացառիկ դեպքերում կիրառելի չեն ծանր կամ առանձնապես ծանր հանցանքների դեպքում»¹:

Նման մոտեցումը խորթ չէ նաև ռեսուրսների խնայողության և վարույթի նպատակահարմարության քաղաքականության առաջամարտիկ Միացյալ Նահանգների օրենսդրությանը: Պրոֆեսոր Օ Հիերը նկատում է. մեղքի ընդունումը կոնկրետ օգուտ է բերում հասարակությանը, նման հայտարարությունները պահպանում են քրեական արդարադատության համակարգի ռեսուրսները և վկաները՝ մասնավորապես տուժողները, զերծ են մնում դատավարության սթրեսներից²:

Ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների վերաբերությամբ նման՝ մտորելու տեղիք տվող հիմնավորումը պայմանավորել է սույն հետազոտության առարկան, այն է՝ զղջման հոգևոր և հոգեբանական խորությունը և դրա արտահայտումն իրավունքի մեջ:

Ֆալսիֆիկացման սկզբունքը որպես գործուն զղջալու իրական լինելը հավաստող մեթոդաբանություն

Մինչև 12.07.23 ՀՕ-273-Ն փոփոխությամբ ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների համար ևս գործուն զղջալու հիմքով պատասխանատվությունից ազատման իրավակարգավորման նախատեսումը պրակտիկայում քննիչները և դատախազները, իրենց առջև ունենալով վարույթի բեռնաթափման խնդիր, կարող էին առանձնապես չխորանալ զղջման անկեղծությունը բացահայտելու գործընթացի մեջ՝ բավարարվելով միայն նվազագույն պայմանների առկայությամբ. եթե գործում չկան այնպիսի փաստական հանգամանքներ, որոնք կստիպեն չկիրառել այդ հիմքը, ապա այն հանգիստ կարող է կիրառվել: Օրինակ՝ հանցանք կատարած անձի անհարգալից վերաբերմունքն իրավապահ մարմինների և տուժողների նկատմամբ կամ ավտովթարի դեպքում նախկինում տվյալ անձի մասնակցությամբ և մեղավորությամբ այլ վթարների առկայությունը, վատ բնութագրվելը, կայուն հակասոցիալական վարք դրսևորելը, եթե նույնիսկ քրեական իրավունքի տեսանկյունից անձն առաջին անգամն է հանցանք կատարել, կարող են լինել այն բացասական գործոնները, որ կհավաստեն

¹ <https://www.e-draft.am/projects/5416/justification> մուսը՝ 08.04.2024:

² M. O'Hear, Remorse, Cooperation, and "Acceptance of Responsibility": The Structure, Implementation, and Reform of Section 3E1.1 of the Federal Sentencing Guidelines, էջ 1514, <https://scholarship.law.marquette.edu/cgi/viewcontent.cgi?referer=&httpsredir=1&article=1278&context=facpub> մուսը՝ 08.04.2024:

զղջման բացակայությունը կամ դրա իրական չլինելը: Հաշվի առնելով այն մինիմալ պայմանները, որոնք նախատեսված են Օրենսգրքի 81-րդ հոդվածի 1-ին մասում, թվում է, թե այս հայեցողությունը կիրառելու համար անհրաժեշտ է ոչ այնքան մեղադրյալի վարքում հավելյալ դրական բացառիկ հանգամանքների առկայությունը, որքան հավելյալ բացասական հանգամանքների բացակայությունը, որը կարող է խոչընդոտել նվազագույն պայմանների առկայությամբ գործուն զղջալու հիմքով անձին պատասխանատվությունից ազատելուն:

Իրավիճակը փոխվում է նոր կարգավորումների պայմաններում: Օրենսդրական փոփոխությամբ նախատեսվել են հավելյալ պայմաններ՝ կապված հանցավորի դերի, նրա վարքագծի և այլ բացառիկ հանգամանքների առկայության հետ: Բարեբախտաբար օրենսդրական ձևակերպումը, ի տարբերություն վերը մեջբերված նախագծի հիմնավորման, առավել հաջող է և ամրապնդում է այն տեսակետը, որ եթե ոչ մեծ և միջին ծանրության հանցանքների մասով զղջման անկեղծությունը խորությամբ առանձին ապացուցման առարկա կարող է չդարձվել, որպիսի պայմաններում առաջ է մղվում վարույթի բեռնաթափման նպատակը, ապա ծանր և առանձնապես ծանր հանցագործություններում անհրաժեշտ է բացահայտել այն **բացառիկ** հանգամանքները, որոնք պետք է հավաստեն զղջման իրական լինելը: Օրենսդրական ձևակերպման հիմքում, գուցե ևս կամա, դրվել է ոչ թե հաստատման, այլ հերքման տեսությունը: Այսինքն, ոչ թե պետք է առաջնորդվել նրանով, որ եթե մեղադրյալի վարքում առկա չեն տվյալներ, որոնք կհերքեն նրա կողմից չզղջալու հանգամանքը, ապա հաստատված համարել, որ նա զղջում է, այլ պետք է փաստել, թե ինչ հավելյալ դրական փաստական տվյալներ են առկա, որոնք հաստատում են մեղադրյալի զղջման մասին և միաժամանակ հերքում չզղջալու հանգամանքը: Նման մոտեցումը փիլիսոփայության մեջ հայտնի է որպես «Ֆալսիֆիկացման սկզբունք»: Ըստ դոկտոր պրոֆեսոր Կարլ Ռեյմունդ Պոպպերի՝ «Ֆալսիֆիկացման սկզբունք»-ի տրամաբանությունը հետևյալն է. ձևակերպում ենք մի խիզախ վարկած, այնուհետև սկսում ենք դիտարկումներ կատարել դա հերքելու համար: Սա ավելի տարածված դրական հավաստումներ փնտրելու մոտեցման այլընտրանքային մոտեցում է: Սա բացասական էմպիրիզմն է, որի մասին առաջին անգամ գրել է Վիկտոր Բրոշարը 1878 թ., որը հետագայում հայտնի է դարձել իբրև Պերս-Պոպպերի մոտեցում¹:

Հասկանալի է, որ անմիջապես կարող են զուգահեռներ անցկացվել մեղադրյալի իրավունքների պաշտպանության թագուհի անմեղության կանխավարկածի հետ, որն ակնհայտորեն հաստատման տեսության մասին է: Այսինքն, եթե չկան բավարար ապացույցներ հաստատված համարելու

¹ Թալեթ Ն., Սև կարապը: «Անտարես» իրատ., Եր., 2021, էջեր 76-77:

համար, որ անձը կատարել է ենթադրյալ հանցանքը, ապա հաստատված ենք համարում նրա անմեղությունը: Սակայն անմեղության կանխավարկածի սկզբունքի հիմք հանդիսացող հաստատման տեսությունը չպետք է տարածվի մյուս իրավահարաբերությունների վրա: Վճռաբեկ դատարանը ևս իր արտահայտած դիրքորոշումներից մեկով վկայում է, որ ազգային իրավամտաճողությանը խորթ չէ հերքման տեսությունը, եթե նույնիսկ այն ակամա կիրառված լինի:

Այսպես. թիվ ԿԴ1/0006/01/15 որոշման 14-րդ կետով Վճռաբեկ դատարանը դիրքորոշում է արտահայտել առ այն, որ. «...Յուրաքանչյուր դեպքում ապացուցման ենթակա է ոչ թե միասնական դիտավորության բացակայությունը, այլ առկայությունը. այլ կերպ ասած՝ արարքը յուրաքանչյուր դեպքում պետք է համարել ոչ միասնական դիտավորությամբ կատարված, եթե միասնական դիտավորությամբ կատարված լինելը չի հաստատվել»:

Թեև մեջբերված որոշումը չի կայացվել գործուն զոջալու ինստիտուտի կիրառման կապակցությամբ, սակայն արտացոլում է մեր այն պնդումը, որ առանձին իրավակարգավորումներում Վճռաբեկ դատարանը ևս առաջնորդվում է ոչ թե հաստատման՝ եթե գործում չկան տվյալներ, որ հերքում են անձի կողմից արարքը միասնական դիտավորությամբ կատարելը, ապա հաստատված ենք համարում, որ այն կատարվել է միասնական դիտավորությամբ, այլ, ընդհակառակը՝ հերքման տեսությամբ՝ գործում պետք է լինեն անձի կողմից արարքը միասնական դիտավորությամբ կատարելը հավաստող փաստական տվյալներ, որպեսզի հաստատված համարվի միասնական դիտավորության առկայության փաստը և միաժամանակ հերքվի դրա բացակայությունը:

Վճռաբեկ դատարանը ամբաստանյալ Էդվարդ Գրիգորի Ադամյանի վերաբերյալ թիվ ԵԷԴ/0048/01/14 գործով դիրքորոշում է արտահայտել, որ եթե հանցանք կատարած անձը ներկայանում է իրավապահ մարմին՝ նախապես իմանալով, որ հայտնի է հանցանքն իր կողմից կատարելու փաստը, և գիտակցելով քննությունից երկար թաքնվելու հնարավորության բացակայությունը, ապա խոսք չի կարող լինել ներկայանալու կամովին բնույթի և կատարվածի համար անկեղծորեն զոջալու մասին, քանի որ վերջինս ի սկզբանե խուսափել է վարույթ իրականացնող մարմնից: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ամբաստանյալի ներկայանալը պայմանավորված է եղել ոչ թե կատարվածի համար զոջալու, մեղքն ընդունելու ցանկությամբ, այլ իր դեմ վկայող բավարար փաստերի ճնշմամբ, այսինքն՝ այն եղել է ոչ թե կամովին, այլ հարկադրված: Դատարանն անդրադարձել է զոջմանը պատասխանատվությունը մեղմացնելու համատեքստում՝ ընդգծելով, որ եթե կամովին ներկայանալը մեղայականով ներկայանալու տարրեր չի պարունակում, ապա այդպիսի զոջումը չի կարող համարվել անկեղծ: Մեջբերված որոշման ամբողջական ուսումնասիրումը վկայում է, որ Վճռաբեկ դատարանը անձի կողմից մեղայականով ներկայանալը կամովին

չբնութագրելու հանգամանքը գնահատելիս, ի թիվս այլնի, հաշվի է առել ամբաստանյալի ոչ դրական բնութագրվելը, ընտանիքի մասին հոգ չտանելը, ամբաստանյալը նաև ունեցել է մարված դատվածություն: Հենց վերջին հանգամանքներն են այն գործոնները, որոնք ըստ էության հերքում են զղջման առկայությունը:

Մեջբերված որոշմամբ, Վճռաբեկ դատարանը գտել է, որ ամբաստանյալի ներկայանալը պայմանավորված է եղել ոչ թե կատարվածի համար անկեղծ զղջալու և մեղքն ընդունելու ցանկությամբ, այլ իր դեմ վկայող բավարար փաստերի ճշմամբ: Նման մոտեցումն ունի խորը հոգևոր արմատ, ինչպես Նաբեկացու աղոթքում է.

Իսկ եթե Աքար Քարմյանն ու Սավուղ Կիսյանը և Սիմոնյան Հուդան

Մեղան այս ասելով հանդերձ չարդարացան,

Վկայում եմ և ես իրավամբ, խոստովանելով, թե արդարացի էր
ճշմարտապես:

Զի նրանք, որ ականա և բռնադատյալ են այդ խոսքն արտասանում,

Չունեն կատարյալ սեր, հետևապես՝ և փրկություն¹:

Զղջման և համագործակցության պարադիգմաների էությունը և կիրառման չափանիշները

Իհարկե զղջման իրավաբանական ասպեկտը չէր կարող ամբողջությամբ հենվել զղջման հոգևոր ընկալման վրա: Նշվածի համատեքստում էլ Օ Հիերը առանձնացնում էր զղջման երկու կատեգորիա՝ զղջման պարադիգմա (հարացույց) և համագործակցության պարադիգմա: Համագործակցության պարադիգմայի դեպքում կենտրոնանում ենք ոչ թե անձի հոգեվիճակի, այլ նրա հետհանցավոր վարքագծի վրա: Համագործակցության պարադիգմայի նպատակն է խրախուսել և պարգևատրել ամբաստանյալի վարքագիծը, եթե այն նպաստում է քրեական արդարադատության համակարգի արդյունավետ կառավարմանը, տուժածների վնասների վերականգնմանը: Զղջման պարադիգման պահանջում է հետաքննել ամբաստանյալի հոգեվիճակը, բացահայտել՝ արդյո՞ք ամբաստանյալը լիովին և ազատորեն ընդունում է հանցանքը կատարելը, արդյո՞ք ընդունում է պատիժը որպես հանցագործության համապատասխան հետևանք, արդյո՞ք ամբաստանյալը զղջում է արածի համար, արդյո՞ք ամբաստանյալը հավատարիմ է խոստափել ապագայում հանցագործություններ կատարելուց²:

Տեսական դաշտում զղջման և համագործակցության պարադիգմաների առանձնացումը կարևոր է, որպեսզի իրավապահ մարմինները, կախված հանցագործության ծանրության աստիճանից, որոշեն, թե որ մարտավարու-

¹ Գ. Նաբեկացի, «Մառյան ողբերգության»: «ՄՀՄ գրատուն» հրատ., Եր., 2020 թ., էջ 148:

² M. O'Hear, Remorse, Cooperation, and "Acceptance of Responsibility": The Structure, Implementation, and Reform of Section 3E1.1 of the Federal Sentencing Guidelines. էջ 1511:

թյամբ և ինչպիսի խորությամբ են քննելու զղջման անկեղծությունը: Շեշտը դրվելու է հաստատման, թե՞ հերքման տեսության վրա, քանի որ համագործակցության պարադիգման ըստ էության իրենից ենթադրում է օրենսդրական մինիմալ պայմանների պահպանման պայմաններում ընդունել գործուն զղջալը, իսկ զղջման պարադիգման պահանջում է խորանալ զղջման անկեղծության, անձի ոչ միայն վարքի, այլև հոգեբանական ընկալումների, զղջման շարժառիթների մեջ: Թեև օրենսդիրը անկեղծ բառի փոխարեն ընտրել է գործուն բառը, ենթադրաբար որպեսզի հնարավոր լինի օրենսդրական չափորոշիչների սահմանմամբ հասնել դրա գործնական կիրառությանը, որպեսզի իրավակարգավորումը չվերածվի հիպոթետիկ կամ պրակտիկորեն չգործող կրոնական պատկերացման, այնուհանդերձ, ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների դեպքում ավելի շուտ անհրաժեշտ է ապացուցել զղջման անկեղծությունը, քան դրա միայն գործուն լինելը: Այստեղ գործուն ասելով նկատի ունենք գործի փաստական հանգամանքների համապատասխանությունը օրենսդրական չափորոշիչներին՝ հանցանքն առաջին անգամ կատարած լինելը, մեղքը չվիճարկելը և այլն:

Պետք է խոստովանել, որ գործուն զղջալու ինստիտուտը հանրային ուշադրություն սկսեց գրավել վերջին փոփոխություններից հետո: Նախկին կարգավորումների պայմաններում իրավապահ մարմինների բեռնափաթեման նպատակով կիրառվող համագործակցության պարադիգման կարող էր համարվել հարգի պատճառ և առանձնապես հետաքրքրություն չէր առաջանա խորանալ զղջման անկեղծության մեջ, գնահատել ապագայում նոր հանցանքներ կատարելու հավանականությունը, քանի որ գործ ունեինք անձանց հետ, որանք կատարել էին ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանքներ, և ենթադրյալ հանցանք կատարած անձանց հանրային վտանգավորությունը բարձր չէր: Այժմ կարող ենք գործ ունենալ անձանց հետ, որոնց հանրային վտանգավորությունը բարձր է ու անկախ նրանից, թե օրենսդրական նախաձեռնությունը ինչպես է հիմնավորվել, ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների մասով զղջման պարադիգման, այսինքն զղջման անկեղծությունը գնահատելը նոր ու կարևոր նշանակություն է ձեռք բերում: Նշվածի համատեքստում հարկ ենք համարում անդրադառնալ զղջման էությանը նաև լեզվական ու կրոնական տեսանկյունից:

Լեզվական և կրոնական ասպեկտները

Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանում «զղջալ» բառը բացատրվում է իբրև ավստսալ, ցավել, փոշմանել, երկրորդ իմաստով նաև մեղքերը խոստովանել, գործածված է նաև ներգործական նշանակությամբ. խոստովանանք արա, զղջա անցյալը, խոյս տուր գալիքից (Շեքսպիր)¹ :

¹http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=29&dt=HY_HY&query=%D5%A6%D5%B2%D5%BB%D5%A1%D5%AC մոնք՝ 08.04.2024:

Էդուարդ Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարան»-ում հայերենի «զղջալ» բառը նշված իմաստներից բացի բացատրվում է նաև ապաշավել և մեղքերը քավել իմաստներով, իսկ «ապաշխարել» բառը հետևյալ կերպ է բացատրում՝ գործած հանցանքի՝ մեղքի համար զղջալ, փոխաբերական առումով՝ նեղություն՝ չարչարանք կրել: Ըստ Հայկազյան բառարանի այն առաջացել է «ապա» (հետո) մասնիկից և «աշխարել»-ից, այսինքն՝ իբրև աշխարհից մեկուսացած: Աճառյանը «ապաշխարել»-ը իրանյան փոխառություն է համարում, որ նշանակում է՝ լալ արած հանցանքի համար: Մաշտոցն այդ բառով է թարգմանել ավետարանական «մեթանոյիա» հունարեն բառը, որը նշանակել է զղջալ արածի համար, ճանապարհները փոխել (Մատթեոս 3.2; 4.17): Հունարեն μετάνοια. բառը («մեթանոյիա»-ապաշխարություն) նաև նշանակում է «մտածողության, մտքի փոփոխություն»: Ըստ Տաթևացու՝ ապաշխարությունն իր մեջ ընդգրկում է սրտի զղջում, խոստովանություն և ապաշխարություն գործով, քանի որ երեք ձևով ենք մեղանչում,- գրում է նա,- խորհրդով, խոսքով և գործով, ուստի պետք է երեք ձևով էլ ապաշխարենք:

Առանց սրտաբուխ զղջման չի կարող լինել և ճշմարիտ ապաշխարություն: Զղջումը գործված մեղքից հրաժարվելն է. այն առաջ է գալիս հավատից: Զճմարիտ զղջումով և անկեղծ խոստովանությամբ ներվում է ամեն մեղք¹:

Ինչպես նկատում ենք բառի քերականական բացատրությունից, այն որոշ իմաստով համընկնում է օրենսդրական կարգավորման հետ. մեղքը խոստովանելը իրավաբանական իմաստով նշանակում է չվիճարկել իրեն մեղսագրվող արարքը, մեղքերը քավելը, այսինքն ապաշխարելը՝ հատուցել կամ հարթել վնասը:

Ի տարբերություն դատախազի, քահանայի գործերը հեշտ են, եթե նույնիսկ քահանան սխալմամբ մեղքերի թողություն տա, Աստված քննում է մարդկանց սրտերը և կարող է տեսնել, թե այդ զղջումը որքանով էր անկեղծ, մինչդեռ դատախազը, չունենալով մարդկանց սրտերը քննելու հնարավորություն, ստիպված է քննել գործի փաստական հանգամանքները: Այսպիսի պայմաններում թվում է, թե իրավակիրառ մշակույթում զղջման չափելի միջոցներ են պետք, մյուս կողմից ցանկացած կանոնի սահմանում պաշտպանների ձեռքին դառնալու է խաղաթուղթ՝ ուղղորդելու հանցավորների նախընտրելի վարքագիծ, որն իրականում կարող է աղերս չունենալ անկեղծ զղջման հետ:

Պատկերացնենք, որ հանցավորը, ով առաջին անգամ է հանցագործություն կատարում, տեսնելով տուժած անձին՝ գիտակցում է կատարվածի բնույթը և անկեղծ զղջում: Օրինակ, չլինելով հավատացյալ, սկսում է գնալ պատարագների, կալանավորված ժամանակ քահանայի հետ հանդիպումներ

¹ <https://surbzoravor.am/post/view/apashkharhutyun> մուտք՝ 08.04.2024:

է խնդրում, սկսում է ապրել հոգևոր կյանքով, իրեն մեղավոր է զգում կատարվածի համար: Նման մեկ նախադեպ բավական է, որ պաշտպաններն ուղղորդեն իրենց պաշտպանյալներին արհեստականորեն դրսևորել համանման վարք: Ուստի զոջման անկեղծությունը գնահատելիս պետք է սահմանել ոչ թե ընդհանուր չափորոշիչներ, այլ կոնկրետ գործի հանգամանքներից վեր հանել զոջման անկեղծությունը վկայող փաստական տվյալներ, միաժամանակ պատշաճ իրավական մշակույթի ձևավորմամբ պետք է իրավապահ մարմիններին զերծ պահել օրենքի միատեսակ կիրառության ապահովման «մոլուցքից», քանի որ անձանց հոգեվիճակները և զոջման պատճառները միատեսակ չեն կարող լինել:

Քրեական օրենսգրքի 81-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նախկինում սույն հոդվածով նախատեսված հիմքով քրեական պատասխանատվությունից ազատված անձը չի կարող նույն հիմքով կրկին ազատվել քրեական պատասխանատվությունից: Մոտեցումը խիստ արդարացված է, քանզի նույնիսկ Աստված անվերջ ներողամիտ չէ.

Որովհետև նրանք, ովքեր հեռացել են աշխարհիկ պղծությունից

Մեր տեր Հիսուս քրիստոսի մասին ունեցած գիտությամբ,

Բայց դարձյալ դրանց մեջ թաթախվելով պարտվել են,

Նրանց վախճանը ավելի վատ կլինի քան նախկինում:

Պետրոս 2:20

Այսպիսի իրավական կարգավորման պայմաններում համագործակցության պարադիգման զիջում է իր դերը զոջման պարադիգմային: Մեթանոյա բառը, որն ըստ Մաշտոցի թարգմանության նշանակում է ապաշխարություն, իսկ հունարենից բառացի թարգմանվում է մտածողության, մտքի փոփոխություն, ձեռք է բերում առանձնակի նշանակություն անձի զոջման պատճառները վեր հանելու համար, որից էլ կարելի է եզրահանգել (թեև միշտ սխալվելու հավանականությամբ, ինչպես բնորոշ է ցանկացած ենթադրության), որ անձն ապագայում նոր հանցանք չի կատարի: Այսինքն իրավակիրառը յուրաքանչյուր անգամ գործուն զոջալու հիմքով անձին պատասխանատվությունից ազատելիս պետք է պատշաճ պատճառաբանի, թե ինչպիսի հանգամանքներ են հիմք հանդիսացել ենթադրելու, որ անձն ունի մտածողության ու մտքի փոփոխություն, որը հիմք է հանդիսացել ենթադրելու, որ զոջումն անկեղծ է և անձն ապագայում նոր հանցանք չի կատարի:

Անկեղծ զոջումը որպես հոգեբանական պրոցես հնարավոր է այն դեպքում, երբ հանցավորը զուրկ չէ ապրումակցման և այլասիրության կարողությունից, որը կարող է դրսևորվել նաև հանցանքը կատարելուց հետո:

Զոջման հոգեբանական ասպեկտը և դրա շարժառիթների բացահայտման կարևորությունը

«Երբեք մի՛ հարցրու, թե ում մահն է գուժում զանգը. քո՛ մահն է գուժում» նախադասությունն անգլալեզու գրականության ամենահայտնի տողերից է:

Ջոն Դոնի տեսանկյունն արտահայտում է ապրումակցման և հոգատարության միջև կապը. ուրիշի ցավը քո սեփական ցավն է:

Ապրումակցումն ուսումնասիրող գիտնական Մարտին Հոֆմանը պնդում է, որ բարոյականության արմատներն անհրաժեշտ է փնտրել ապրումակցման մեջ, քանի որ հնարավոր զոհի (վշտի, վտանգի կամ կարիքի մեջ գտնվող մարդու) հետ նույնականացումն ու նրա վիշտը կիսելն է դրդում մարդուն օգնելու կարիքավորներին: Ըստ Հոֆմանի՝ բացի ապրումակցման և այլասիրության այս անմիջական կապից, որ դրսևորվում է միջանձնային հարաբերություններում, նույն այդ ապրումակցման կարողությունը՝ քեզ ուրիշի տեղում պատկերացնելն է դրդում մարդկանց հետևել որոշակի բարոյական սկզբունքների: Ապրումակցումն ընկած է տարաբնույթ բարոյական դատողությունների ու արարքների հիմքում: Դրանցից մեկը «ապրումակից զայրույթն» է, որը Ջոն Սթյուարտ Միլը բնութագրում է որպես «վրեժխնդրության բնական զգացում, որն առաջ է գալիս ինտելեկտի և համակրանքի ազդեցությամբ և ուղղված է այն ամենին, ինչը վիրավորում է մեզ՝ այլ մարդկանց վիրավորելու միջոցով»: Միլն այս մարդկանց անվանում է «արդարության պահապաններ»: Մեկ այլ օրինակ, որում ապրումակցումը մղում է բարոյական արարքի, այն դեպքերն են, երբ կողմնակի անձը փորձում է միջամտել՝ պաշտպանելով զոհին. սոցիալական գիտափորձերի արդյունքները ցույց են տալիս, որ որքան մեծ է ականատեսի ապրումակցումը, այնքան մեծ է հավանականությունը, որ նա կմիջամտի¹: Ապրումակից զայրույթը պարզելը հատկապես կարևոր է այնպիսի հանցանքներում գործուն զղջալը բացահայտելու համար, ինչպիսիք են անհրաժեշտ պաշտպանությունը՝ այլ անձի պաշտպանելու դեպքում, հակաիրավական ոտնձգություն կատարած անձին բռնելիս վնաս պատճառելը՝ սահմանազանցման դեպքում և այլն:

Դենիել Գոուլմանն իր հուզական ինտելեկտ աշխատությունում անդրադարձել է ապրումակցման կարևորությանը՝ այն ներկայացնելով առանձին տեսակի հանցանքներ կատարած անձանց հոգեվերլուծության համատեքստում:

Գոուլմանը վերլուծում է Էրիկ Էքլորդի հոգեվիճակն այսպես. լինելով Թոնյա Հարդինգի թիկնապահը, Էքլորդը ավագակային հարձակում էր կազմակերպել Նենսի Քերիգանի դեմ, ով 1994 թ. կանանց գեղասահքի Օլիմպիական ոսկու համար մղվող պայքարում Թոնյայի գլխավոր մրցակիցն էր: Հարձակման ժամանակ վնասել էին Քերիգանի ծունկը՝ զրկելով նրան վճռորոշ ամիսներին մարզվելու հնարավորությունից: Սակայն տեսնելով արտասովոր Քերիգանին հեռուստատեսությամբ՝ Էքլորդը հանկարծակի զղջման զգացումով էր

¹ Hoffman, M. "Empathy, Social Cognition, and Moral Action" in W. Kurtines and J. Gerwitz, eds., *Moral Behavior and Development: Advances in Theory, Research, and Applications* /New York: John Wiley and Sons, 1984/.

համակվել և փնտրել էր մեկին, որի առաջ կբացահայտեր իր գաղտնիքը: Սա հիմք էր հանդիսացել հաջորդող մի շարք իրադարձությունների համար, որոնց արդյունքում հարձակում իրականացնողները ձերբակալվել էին: Այսպիսին է ապրումակցման ուժը: Սակայն, դրանից, որպես կանոն և դժբախտաբար զուրկ են բոլոր նրանք, ովքեր գործում են ամենազարհուրելի հանցանքները: Բռնաբարոյները, մանկապիղծներն ու ընտանեկան բռնություն իրականացնողներն ունեն ընդհանուր հոգեբանական ճեղքվածք. նրանք անկարող են ապրումակցելու:

Իրենց զոհերի ցավն զգալու այս անկարողությունը թույլ է տալիս նրանց ինքնախաբեությամբ զբաղվել՝ խրախուսելով սեփական հանցանքները: Բռնաբարոյներին բնորոշ ստերից են՝ «Կանայք, իրականում, ցանկանում են բռնաբարվել» կամ «Եթե կինը դիմադրում է, ապա ընդամենը անձեռնմխելիություն է խաղում», մանկապիղծներն իրենց համոզում են հետևյալ կերպ՝ «Ես չեմ վնասում երեխային, ընդամենը սեր եմ արտահայտում» կամ «Սա պարզապես սիրո մեկ ուրիշ ձև է», ֆիզիկական բռնություն կիրառող ծնողները պնդում են՝ «Սա ընդամենը խիստ դաստիարակություն է»:

Շատ անհույս է ապրումակցման զգացում առաջացնել հանցագործների մեկ ուրիշ խմբի ներկայացուցիչների՝ փսիխոպաթների մոտ: Փսիխոպաթները (կամ հոգեպաթները) տխրահոչակ կերպով օժտված են մարդկանց՝ իրենց հանդեպ դրական տրամադրելու ընդունակությամբ և, միևնույն ժամանակ, խղճի խայթի միանգամայն բացակայությամբ, նույնիսկ երբ խոսքը վերաբերում է ամենադաժան և սառնասիրտ արարքներին: Հոգեպաթիան՝ որևէ տեսակի ապրումակցում կամ կարեկցանք, կամ գոնե խղճի խայթ զգալու անընդունակությունը, ամենամտահոգիչ հուզական արատներից մեկն է: Հոգեպաթի սառնասրտության հիմքում, ըստ երևույթին, ընկած է մակերեսային հուզական կապերից ավելին որևէ բան ստեղծելու անընդունակությունը: Հնարավոր է, որ հանցանքի է վերաճում մարդկանց ահ ներշնչելու անառողջ հուզական հմտությունը, որը կենսական կարևորություն ունի բռնություններով լի բնակավայրերում գոյատևելու համար, որտեղ ավելորդ ապրումակցումը կարող է հակառակ ազդեցությունն ունենալ: Ապրումակցման այսօրինակ բացակայության ամենաաղետաբեր ձևերից մեկը բացահայտվել է բռնարար ամուսինների հետազոտության ժամանակ: Հետազոտության արդյունքում դուրս է բերվել ֆիզիոլոգիական այն անոմալիան, որը բնորոշ է դաժանագույն բռնարար ամուսիններից շատերին, ովքեր կանոնավոր կերպով ծեծի են ենթարկում իրենց կանանց կամ սպառնում դանակով ու զենքով: Այս սառնասիրտ բռնարար ամուսինները տարբերվում են իրենց կանանց ծեծի ենթարկող տղամարդկանց նմանությունից: Նախևառաջ՝ նրանք շատ ավելի հաճախ են բռնություն կիրառում նաև ամուսնությունից դուրս՝ ծեծկռտուքի բռնվելով բարերում և վիճելով գործընկերների ու ընտանիքի այլ անդամների հետ: Եվ մինչդեռ բռնարար

ամուսիններից շատերը բռնություն են կիրառում իրենց կանանց նկատմամբ իմպուլսիվ կերպով՝ մերժված, լքված լինելու վախի կամ խանդի հողի վրա, այս հաշվենկատ բռնարարները ծեծի են ենթարկում իրենց կանանց, ըստ էության, առանց որևէ պատճառի և սկսելուն պես, ոչինչ ունակ չէ զսպելու նրանց գործողությունները: Ինչպես պնդում է Հեյրը, հենց այն պատճառով, որ ցավի հեռանկարը տագնապ չի հարուցում, փսիխոպաթենրին չի հուզում այս կամ այն արարքի արդյունքում իրենց սպասվող պատիժը: Եվ քանի որ անձամբ իրենք զուրկ են վախի զգացումից, նրանք ունակ չեն հասկանալու նաև իրենց զոհերի վախը կամ ցավը, հետևաբար՝ ապրումակցել կամ կարեկցել նրանց¹:

Այսօրինակ հետազոտությունները հատկապես կարևորություն են ձեռք բերում ընտանիքում բռնության դեպքերով գործուն զղջալու հիմքով պատասխանատվությունից ազատելու դեպքում: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ անկախ քրեական հայց ներկայացնելուց կամ քրեական հայցից հրաժարվելուց՝ դատախազի նախաձեռնությամբ քրեական հետապնդումն իրականացվում է հանրային կարգով ընտանիքում բռնության հատկանիշներով հանցանքներով: ՀՀ իրավակիրառ պրակտիկային և բնակչության մտածողությանը մինչև քրեական դատավարության նոր օրենսգրքի ընդունումը խորթ չէին այն իրավիճակները, երբ կանայք ընտանիքում բռնության դեպքերով դիմում էին ոստիկանություն, սակայն հետագայում տարաբնույթ պատճառներով՝ ֆինանսական կախվածություն, երեխաների խնամք, հարազատների ճնշում, հետ էին վերցնում բողոքը և վարույթը կարճվում էր բողոքի բացակայության հիմքով:

Մասնավոր մեղադրանքի նոր մոդելի ընդունման պայմաններում, մինչև դրա օրինական ուժի մեջ մտնելը, իրավակիրառ պրակտիկայում միտում է նկատվում կնոջ բողոքի բացակայության պայմաններում վարույթը կարճել գործուն զղջալու հիմքով, քանի որ բողոքի բացակայությունը՝ հատկապես ընտանիքում բռնության հատկանիշների առկայության պայմաններում, չի կարող հաշվի առնվել և սա, չնայած այն հանգամանքին, որ քրեական օրենսգրքի 81-րդ հոդվածի 1.2-րդ մասով նախատեսված են մի շարք հանցագործություններ, որոնց վրա չի տարածվում գործուն զղջալու կարգավորումը, այդ թվում 196-րդ հոդվածի 2-րդ մասը, որը պատասխանատվություն է սահմանում հանցավորից նյութական կամ այլ կախվածության մեջ գտնվողի նկատմամբ գործադրված ֆիզիկական ուժեղ ցավի կամ հոգեկան ուժեղ տառապանքի համար: Նկատի ունենալով, որ իրավապահ մարմինների կողմից գործուն զղջալու մասին նորմը կիրառելը կարող է հետապնդել բացառապես ծանրաբեռնվածության բեռնաթափման նպատակ, գտնում ենք, որ բռնարար ամուսինների վարքագիծը պետք է դարձվի առանձին ուսում-

¹ Գոուլման Դ., Հուզական ինտելեկտ: «Զանգակ» հրատ., Եր., 2020, էջեր 161-166:

նասիրության առարկա՝ հնարավորինս վեր հանելով բռնի վարքի պատճառները՝ հասկանալու համար ապագայում այդ վարքն ուղղելի դարձնելու հնարավորությունները:

Նկատենք, որ 81-րդ հոդվածի 1.2-րդ մասում ներառված չեն այնպիսի հանցանքներ, ինչպիսիք են սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցանքները, մինչդեռ Հոֆմանի գիտական հետազոտությամբ ցույց տվեցինք, որ նման հանցագործություններ կատարող անձինք զուրկ են ապրումակցման կարողությունից, իսկ գործուն զոջալը հուզական և հոգևոր վիճակ է, որին հնարավոր է հասնել դիմացինի ցավը զգալու կամ գոնե հասկանալու ճանապարհով:

Ուշագրավ է նաև, որ 81-րդ հոդվածի 1.2-րդ մասում թեև արդարացիորեն նախատեսվել է Օրենսգրքի 188-րդ հոդվածը՝ մարդու թրաֆիքինգը կամ շահագործումը, որի դեպքում չի կարող կիրառվել գործուն զոջալը, սակայն տարօրինակ կերպով բաց է թողնվել 189-րդ հոդվածը՝ երեխայի կամ անօգնական վիճակում գտնվողի թրաֆիքինգը կամ շահագործումը, որն ավելի ծանր հանցագործություն է: Քրեական օրենսգիրքը չի սահմանում երեխա հասկացությունը, հետևաբար հատկապես սեռական շահագործման կամ թրաֆիքինգի դեպքերում անհրաժեշտ է հղում կատարել միջազգային իրավական ակտերին, այս դեպքում՝ «Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիային (Լանզարոտեի կոնվենցիա), որի 3-րդ հոդվածի համաձայն երեխա հասկացությունը մեկնաբանվում է որպես 18 տարին չլրացած անձ¹:

Օրենսգրքի 81-րդ հոդվածի 1.3-րդ մասը սահմանում է, որ եթե հանցագործությունից տուժողը 14 տարին չլրացած անձ է կամ հոգեկան առողջության խնդիրների կամ մտավոր զարգացման մեջ հետ մնալու հետևանքով լրիվ կամ մասնակիորեն զրկված է իր դեմ ուղղված հանցագործության բնույթն ու հետևանքները գիտակցելու կամ իր վարքագիծը ղեկավարելու հնարավորությունից, ապա նրա դեմ ուղղված հանցանք կատարած անձը նշված հոդվածի 1.1-ին մասով նախատեսված հիմքով չի կարող ազատվել քրեական պատասխանատվությունից: Կարծում ենք, որ այստեղ տեղի է ունեցել տեխնիկական վրիպակ: Օրենսդիր մարմինը ուշադրություն չի դարձրել այն հանգամանքներին, որ որպես երեխա պետք է դիտարկել մինչև 18 տարեկան անձանց, իսկ Օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անօգնական վիճակը կարող է պայմանավորված լինել ինչպես հոգեկան, այնպես էլ ֆիզիկական վիճակով: Հետևաբար Օրենսգրքի 189-րդ հոդվածը չի նախա-

¹ «Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիա:

տեսվել 81-րդ հոդվածի 1.2 մասում, ենթադրելով, որ 1.3 մասը լուծում է այդ հարցը, որպիսի պայմաններում 15-17 տարեկան անչափահասների, ինչպես նաև ֆիզիկական վիճակով պայմանավորված անօգնական վիճակում գտնվող անձանց նկատմամբ տեղի ունեցող թրաֆիքինգի դեպքում օրենսդրական արգելքի բացակայության պայմաններում, ստացվում է, որ կարող է կիրառվել գործուն զոջալու հիմքով պատասխանատվությունից ազատելու կարգավորումը: Թեև ինստիտուտը հայեցողական է և բարեխղճության դեպքում չի գործարկվի, այդուհանդերձ որոշակի վտանգներ է պարունակում և ստացվում է, որ այն իրավապահ մարմինը, որն այսպիսի հանցագործության մասով կիրառի գործուն զոջալը՝ օրենսդրական արգելքի բացակայության պայմաններում ձևական իմաստով օրենք խախտած չի լինի:

Քննարկվեցին իրավիճակներ, որոնց դեպքում վտանգավոր է գործուն զոջալը կիրառելը, սակայն հարկ է նկատել, որ որոշ իրադրություններում ընդհուպ մշակութային մտածողությունը կարող է հանգեցնել ինստիտուտը անհարկի չկիրառելուն:

Էմորի համալսարանի իրավունքի և հոգեվերլուծության պրոֆեսոր Մարթա Գրեյս Դունկանը քրեական իրավունքը բացատրելու համար օգտագործում է գրականություն և հոգեվերլուծություն: Նրա աշխատությունը նվիրված է անչափահասների կողմից կատարված հանցանքների ուսումնասիրությանը, որոնցից մեծ մասի վերաբերությամբ դատարանը չի կիրառել զոջման հիմքով պատասխանատվությունից ազատելու իրավակարգավորումը տարբեր հիմնավորումներով:

Դունկանը, վերլուծելով Աստվածաշունչը, գրականության և ֆիլմերի որոշ դրվագներ, ցույց է տալիս, որ հասարակության մեջ արմատացած է օրինակ քնի վերաբերյալ բացասական կարծրատիպ:

Եվ եկավ աշակերտների մոտ ու նրանց քնած գտավ:

Պետրոսին ասաց.«Այդպես, մեկ ժամ էլ՝ չկարողացաք ինձ

հետ արթուն մնալ: Արթո՛ւն կացեք ու աղոթե՛ք, որպեսզի

փորձության մեջ չընկնեք. հոգին հոժար է բայց մարմինը՝ տկար»

Մատթեոս 26:40

«Ամեն ինչ Եվայի մասին» ֆիլմում դրամատուրգիայի ցինիկ քննադատ Էդիսոն Դեյվիթը նկատում է, որ Եվան պատրաստվում է քնել և ասում է. «Դուք հիմա կարող էիք քնել, չէ՞: . . . Իսկական մարդասպանի նշան»:

Քունն ըստ գեղարվեստական գրականության մեկնաբանվում է անխղճության դրսևորում, սակայն Դունկանը խնդիրն ուսումնասիրել է հոգեբանական մակարդակում և ցույց է տալիս, որ իրականում դա կարող է լինել փախուստ իրավիճակից: Դունկանի հետազոտությունը կենտրոնացած էր դեպի խնդրի հոգեբանական ասպեկտը, նա ցույց է տալիս, որ անչափահասները կարող են

սկզբում չզղջալ, սակայն մասնագետներն ասում են, որ նրանք այնուամենայնիվ կարող են հասնել դրան¹:

Գործուն զղջալու հիմքով պատասխանատվությունից ազատելու հայեցողությունը թողնված է իրավակիրառին, դատահոգեբանական փորձաքննություն նշանակելու պարտավորություն առկա չէ, սակայն հոգեբանական մոտեցումները հաշվի առնելը շատ կարևոր է բացահայտելու համար զղջման իրական շարժառիթները: Քննիչը, դատախազը և դատավորը մասնագիտական տեսանկյունից չպետք է սահմանափակվեն անձին պարզունակ շարադրանքով հետևյալ հարցը տալով. դուք զղջում եք կատարվածի համար: Նրանք պետք է մշակեն հարցաքննության որոշակի մարտավարություն՝ բացահայտելու համար ոչ միայն գործի չոր փաստական հանգամանքները, այլև հուզական վիճակը, որն ուղեկցել է անձին հանցանքը կատարելու պահին կամ դրանից հետո, ինչպիսի հանգամանքներ են հանգեցրել հուզական վիճակի և արարքի հանդեպ ունեցած վերաբերմունքի փոփոխությանը:

Գրագետ իրավակիրառ մշակույթի ձևավորումը կարևոր է, որպեսզի իրավապահները խուսափեն երկու հնարավոր ծայրահեղությունների դիմելուց. կա՛մ մեխանիկորեն, նվազագույն պայմանների պահպանմամբ կիրառեն գործուն զղջալու մասին նորմը՝ թեթևացնելով վարույթի ծանրաբեռնվածությունը, կա՛մ առհասարակ խուսափեն այն կիրառելուց, հատկապես երբ անձի վարքում սկզբնական շրջանում բացակայել է համագործակցության պատրաստակամությունը:

Այսպես՝ մեղսունակությունը չբացառող հոգեկան հուզմունքի վիճակում հանցագործություն կատարելիս անձը կարող է սկզբնական վրեժի, խանդի, ցասումի հուզական վիճակում լինել, որը չի կարող բացառել, որ այն հաղթահարելուց հետո նա կարող է ապրել անկեղծ և խորը զղջում, միայն թե գործի փաստական հանգամանքներում պետք է երևան այն բացառիկ գործոնները, որոնք կստիպեն հավատալ զղջման անկեղծությանը: Հետևաբար զղջման առկայությունը որոշելիս անհրաժեշտ է առաջնորդվել արարքի բնույթը գիտակցելու պահով: Օրինակ՝ մեղադրյալն իրեն հայիոյաժ տուժողին հանկարծակի ծագած անուղղակի դիտավորությամբ սպանել է ընտանիքի պատիվը բարձր պահելու համար և չի գիտակցում (նկատի չունենք արարքի քրեական հակաիրավականությունը գիտակցելը, այլ բարոյական գիտակցումը) իր արարքի սխալ լինելը, ընդհակառակը՝ դա համարում է պատվի հարց, սակայն տուժողի մոր հետ առերեսումը և սզակիր մոր կերպարը տեսնելը կարող է ստիպել նրան վերաբերվել իր գործողությունները, ուստի զղջման մասին խոսելիս կարևոր չէ, թե երբ է դա տեղի ունեցել, այլ այն, թե ինչ հանգամանք է ազդել անձի կողմից իր արարքի վերաբերմունքի վրա:

¹ Duncan, M.G. Emory University School of law, SO YOUNG AND SO UNTENDER. Remorseless Children and the Expectations of the Law, էջեր 30- 36:

Հետևաբար, հետհանցավոր վարքագիծ ասելով չպետք է նկատի ունենալ միայն կոնկրետ արարքին ուղեկցող կամ անմիջապես հաջորդող վարքագիծը: Բարոյական տեսանկյունից արարքի սխալ լինելը գիտակցելու պահից դրսևորած հետհանցավոր վարքագիծը կարող է հաշվի առնվել զղջման անկեղծությունը գնահատելիս:

Քրեական օրենսգրքի 28-րդ հոդվածը սահմանում է անձի պատասխանատվությունը, երբ առկա է ընկալման սխալ արարքի փաստական հանգամանքների մեջ: Զղջման շարժառիթի բացահայտումը կարևոր է նաև այս համատեքստում: Հոդվածի 6-րդ մասով սահմանվում է. «Եթե անձի դիտավորության մեջ ընդգրկվածից բացի, առաջանում են նաև այլ հետևանքներ, ապա անձն այդ հետևանքների համար քրեական պատասխանատվության է ենթարկվում միայն այն դեպքում, երբ դրանց նկատմամբ առկա է անզգուշություն»: Քննարկենք 191-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված արարքը՝ մարդուն առևանգելը, որն անզգուշությամբ առաջացրել է հանցագործությունից տուժած անձի մահ կամ առողջությանը ծանր վնասի պատճառում կամ այլ ծանր հետևանք: Օրինակ՝ ամուսնության նպատակով կնոջ առևանգումը, որը խորթ չէ հայկական մշակույթին և առանձին տարածաշրջաններում, թեև հազվադեպ, սակայն մեր օրերում էլ կարող է դեռ հանդիպել: Հնարավոր է, որ այս հանցակազմում անձը զղջա միայն չնախատեսված հետևանքն անզգուշությամբ թույլ տալու համար:

Զղջման շարժառիթները շատ տարբեր կարող են լինել. երբեմն հանցանք կատարած անձինք կարող են փշրված թվալ, ճնշված սարսափելի գիտակցությամբ, թե ինչ են արել իրենց կյանքի հետ: Օրենքը չի կարող մշտապես տարբերել այս տեսակ զղջումը բուն հանցագործության համար ափսոսանքից: Մեղադրյալը կարող է զղջալ, քանի որ հանցանք կատարելու պատճառով ստիպված է կրել պատիժ և տառապանքներ, կարող է զղջալ կոնկրետ այդ տեսակի հանցագործություն կատարելու համար, օրինակ գողությունը վերաճել է կողոպուտի և տուժողը ստացել է մարմնական վնասվածք: Անձը, ով միայն գողանալու նպատակ ուներ, կարող է խորապես զղջալ կամա թե ակամա մարմնական վնասվածք պատճառելու համար կամ պարզել, որ գողություն է կատարել պատերազմում զոհվածի ընտանիքից և խորապես զղջա արարքի համար՝ պայմանավորված տուժողի՝ իր համար կարևորություն ունենալու հանգամանքով, սակայն իրականում չզղջա կոնկրետ սկզբնական նպատակ համարվող հանցագործության համար: Զղջման այսօրինակ դրսևորումները պետք է հաշվի առնվեն քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի համատեքստում՝ իբրև պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք, սակայն չեն կարող որակվել իբրև գործուն զղջալ, քանի որ մտածողության փոփոխություն առհասարակ դեպի հանցավոր վարքագիծն առկա չէ:

Արդյո՞ք մեղսագրվող արարքը չվիճարկելը գործուն զղջալու ինստիտուտի կիրառման բացարձակ պայման է

Ինչպե՞ս է պետք վարվել այն իրավիճակներում, երբ անձն ընդունում է իր կողմից հանցավոր արարքի կատարումը, սակայն ոչ այն որակումը, որը տվել են իրավապահ մարմինները: Կարո՞ղ է արդյոք վիճարկվել հոդվածի առանձին մաս կամ դիտավորության ձև կամ ծանրացնող հանգամանքի առկայություն, իդեալական համակցության դեպքում հանցանքներից որևէ մեկի անհարկի վերագրումը: Այլ խոսքով տեղի է ունենում մեղքի մասնակի ընդունում:

Փորձենք զուգահեռներ անցկացնել համաձայնեցման վարույթի հետ: Քրեական դատավարության օրենսգրքի 459-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը բավարարում է համաձայնեցման վարույթ կիրառելու մասին միջնորդությունը, եթե մեղադրյալը համաձայն է իրեն մեղսագրվող արարքին: ԵԿԴ/0209/01/10 քրեական գործով ՀՀ վճռաբեկ դատարանը դիրքորոշում է արտահայտել առ այն, որ դատական քննության արագացված կարգ կիրառվում է այն դեպքում, երբ մեղադրյալը կամ ամբաստանյալը համաձայն է կատարված արարքի փաստական հանգամանքների, մեղքի ձևի, շարժառիթների, արարքի իրավական գնահատականի, ինչպես նաև պատճառված վնասի բնույթի ու չափի վերաբերյալ մեղադրական եզրակացության մեջ առկա ենթադրության հետ: Նշենք, որ համաձայնեցման վարույթը դատաքննության արագացված կարգի գենետիկական շարունակությունն էր, որը որոշ առանձնահատկություններով տեղ գտավ քրեական դատավարության նոր օրենսգրքում: Քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցողական լուծումների, նորարարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանման գործնական ուղեցույցում, հղում կատարելով Վճռաբեկ դատարանի մեջբերված որոշմանը, միաժամանակ նշվում է, որ թեև քրեական դատավարության օրենսգրքն ուղղակիորեն չի նախատեսում, սակայն համաձայնության մասին արձանագրության բովանդակությունից բխում է, որ կողմերը կարող են բանակցել նաև մեղադրյալին մեղսագրված արարքին տրված իրավական գնահատականի շուրջ: Ամեն դեպքում, համաձայնեցված իրավական գնահատականը չի կարող ակնհայտորեն չհամապատասխանել մեղադրանքի փաստական հանգամանքներին, քանի որ այդ դեպքում դատարանը չի ընդունի համաձայնության մասին արձանագրությունը¹: Անհրաժեշտ է հասկանալ, թե որքանով է մեղքի ձևի, շարժառիթների ընդունման ամբողջականության պահանջը վերաբերելի գործուն զղջալու դեպքում մեղքի ընդունմանը, և եթե համաձայնեցման վարույթի

¹ Դուկայան Հ., Մելքոնյան Դ., Նիկողոսյան Ա., ՀՀ քր. դատ. նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանման գործնական ուղեցույց: Եվրոպայի խորհուրդ, հուլիս, 2022 թ., էջեր 581-582:

շրջանակներում կողմերը կարող են արարքի որակումը քննարկել միմյանց հետ, արդյո՞ք գործուն զղջալու դեպքում ևս այն չպետք է թույլատրելի լինի: Մեղքի ձևի, շարժառիթների, տրված իրավական գնահատականի հետ համաձայն լինելը համաձայնեցման վարույթի շրջանակներում կարևոր է, քանի որ այս վարույթով հիմնական դատալսումների փուլը բաց է թողնվում և ապացույցների հետազոտություն տեղի չի ունենում, ինչն էլ հանգեցնում է նրան, որ տրված իրավական գնահատականի համապատասխանությունը գործի փաստական հանգամանքներին հետազայում չի կարող բողոքարկվել: Գործուն զղջալու դեպքում ապացույցների հետազոտման արգելք չկա, հետևաբար այդ հարցը կարող է քննության առարկա դարձվել քրեական վարույթի կամ գործի ցանկացած փուլում: Ուստի իրեն մեղսագրված արարքի ընդունումն այս դեպքում չպետք է հասկանալ բացարձակ իմաստով՝ հատկապես դատաքննության փուլում դատավորի կողմից կիրառվելու դեպքում:

Հետևաբար, թեև կարևոր է, որ անձն ընդունի իր մեղքը, սակայն կարծում ենք՝ պարտադիր չէ, որ նա համաձայն լինի մեղքի ձևի, հանցագործության շարժառիթների հետ կապված վերագրումներին ամբողջությամբ: Նա կարող է նույնիսկ ապացույցների թույլատրելիությունը վիճարկել, քանի որ գործուն զղջալը չպետք է վերածել այնպիսի առևտրային իրավահարաբերության, ինչպիսին համաձայնեցման կամ համագործակցության վարույթն է, որտեղ կարևոր է մեղքի ընդունումն իր բոլոր ձևերով և այլ հանցագործության բացահայտմանն աջակցելը՝ որպես խրախուսանք ստանալով ավելի մեղմ պատիժ:

Վերջին դիտարկման օրինակ է Վարդան Պետրոսյանի մասնակցությամբ ավտովթարի դեպքը, երբ վերջինս զղջում էր կատարվածի համար, պատրաստ էր օրենքով սահմանված պատիժը կրել, սակայն վիճարկում էր առանձին ապացույցների թույլատրելիությունը, ցանկանում էր հասնել արդար դատաքննության¹:

Նման մոտեցումը կարող է ընդունելի չլինել, որովհետև զղջալ բառի բառարանային բացատրությունը, գրականության մեջ առկա մոտեցումները տպավորություն են ստեղծում, որ անձը, ով իրականում զղջում է, ոչ միայն պետք է պատրաստ լինի պատժի կրմանը, այլև մեղքն ընդունի իր բոլոր վերագրումներով: Դուրեկանն իր աշխատությամբ մեջբերում էր Ֆրոյդի այն տեսությունը, որ երբեմն մեղքի զգացումը նախորդում է հանցանքի կատարմանը²: Մեղքի զգացումով համակված մարդիկ կարող են հանցանք կատարել, քանի որ ձգտում են տառապանքի և պատժի: Դուստոնսկին հավանաբար գործած հանցանքի համար անպայման պատիժ կրելու մեղքի

¹ Պետրոսյան Վ., «Իմ կիսատ թողած երգը», <https://www.youtube.com/watch?v=sSCoLNN-a6Y> մուտք՝ 08.04.2024:

² Duncan, M.G. Նույն աշխատությունը: Էջ 92:

զգացումը նկատի ուներ, երբ գրում էր հետևյալ միտքը. «Ես վախենում եմ միայն իմ տառապանքներին արժանի չլինելուց»: Այս միտքը անտարբեր չի թողել նույնիսկ համակենտրոնացման ճամբարի դժոխքը հաղթահարած հայտնի հոգեթերապևտ Վիկտոր Ֆրանկլին¹: Սակայն Հարկ ենք համարում բերել աստվածաշնչյան ամենահայտնի օրինակը, ևս մեկ անգամ ընդգծելով, որ պարտադիր չէ, որ զղջումն ուղեկցվի անհաղթահարելի մեղքի զգացումով և տառապանքով, որպեսզի համարվի անկեղծ. Հուդան իր դավաճանության համար զղջաց, ապրեց այդ կեղեքող մեղքի զգացումը և ինքնասպան եղավ՝ այդպես էլ ներման չարժանանալով, քանի որ ընտրեց ինքնասպանության ճանապարհը, մինչդեռ Պետրոսը Հուդայից իմաստուն եղավ, նա լաց եղավ, խոստովանեց և խաղաղություն գտավ²:

Կոռուպցիոն բնույթի հանցանքներով գործուն զղջալը կիրառելու հնարավորության իրավական և բարոյական կողմը

Հոգեբանական տեսանկյունից ուշադրության են արժան շահադիտական դրդումներով, նախապես նախապատրաստության փուլ ունեցող հանցանքները: Մարդը չի կարող մեկ ամիս հանցագործություն պլանավորել և մեկ օրում միայն բռնվելուց հետո անկեղծ զղջալ:

Կան հանցատեսակներ, որոնք պահանջում են հատուկ որակներ, օրինակ խարդախությունը, կոռուպցիոն բնույթի հանցագործությունները: Եթե առաջնորդվելու լինենք բացառապես նպատակահարմարության տեսությամբ, երբեմն կոռուպցիոն բնույթի հանցագործությունները քննելիս նպատակահարմար կարող է լինել կիրառել գործուն զղջալու հիմքով պատասխանատվությունից ազատելը ոչ թե բուն զղջման, այլ վերը քննարկված համագործակցության պարադիգմայի հիմքով, որի նպատակը բացառապես պետությանը պատճառված վնասների վերականգնումն է: Մանավանդ, որ 81-րդ հոդվածի 1.2 մասով սահմանված արգելք չկա: Սա լավագույն մոտեցումը չէ և կարող է կիրառվել ոչ թե որպես պետության հիմնական քաղաքականություն, այլ բացառապես այն իրավիճակներում, երբ ընտրությունը վատի ու վատագույնի միջև է: Հիմնավորումը, որ ծայրահեղ դեպքում կարելի է նման հանցագործություններում գործուն զղջալը կիրառելիս առաջնորդվել համագործակցության պարադիգմայով, հետևյալն է. եթե անձը հանցանքը կատարել է որպես պաշտոնատար անձ և պաշտոնից զրկվել է, հայտնվել մեղադրյալի կարգավիճակում, մեղքն ընդունում է և ոչ արդարացնող հիմքով վարույթի կարճումից հետո չի կարող պաշտոն զբաղեցնել, ապա նրա հանրային վտանգավորությունն այլևս չեզոքացված է, եթե նույնիսկ նա չի ապրում իրական և խորը զղջում:

¹ Ֆրանկլ Վ., Կյանքին ասել այդ: «Գրատուն» հրատ., Երևան 2022 թ., էջ 98:

² Matthew 26:75. According to The Interpreter's Bible, Peter "was wiser than Judas; he wept, made confession, and found peace. ... He became a 'rock' in very fact". 7 The Interpreter's Bible 590 (1979). Մեջբերումն ըստ Duncan, M.G. Նույն աշխատությունը: էջ 94:

Հայաստանի Հանրապետությունը չպետք է վերածվի մի պետության, որտեղ սոցիալական ծայրահեղ պայմանների, սխալ միջավայրում մեծանալու կամ հուզական վիճակով պայմանավորված կամ զորամասերում պարբերաբար ճնշումների և ծաղրի ենթարկվող զինվորների կողմից կատարված հանցանքները պատժվում են ամենայն խստությամբ, իսկ սառնասիրտ և հաշվենկատ հանցանք կատարած անձինք, ովքեր ոտնձգում են կայուն պետականություն ունենալու դեմ, ազատվեն պատասխանատվությունից գործուն գղջալու հիմքով: Ոչ գրագետ բալանսի պահպանումը նպատակահարմարության և արժեքների միջև, եթե նույնիսկ այն հետապնդում է պետական շահի նպատակ, կարող է քայքայել հասարակության վստահությունը իրավապահ համակարգի ու պետության հանդեպ:

Ամփոփելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ գործուն զղջալու հիմքով անձինք երեական պատասխանատվությունից ազատելու հիմքի կիրառման պարագայում անհրաժեշտ է տարբերակված մոտեցում ցուցաբերել Օրենսգրքի 81-րդ հոդվածի 1-ին և 1.1-ին մասերի նկատմամբ: Ոչ մեծ և միջին ծանրության հանցանքների դեպքում զղջման հանգամանքի ապացուցման մեթոդաբանությունն ընտրելիս առաջնորդվել հաստատման տեսությամբ և համագործակցության պարադիգմայով, որոնց էությունը բացահայտվել է հոդվածում, իսկ ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների դեպքում առաջնորդվել Ֆալսիֆիկացիայի սկզբունքով և զղջման պարադիգմայով:

282

սեռական ազատության կամ սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցանքները: Այսպիսի մոտեցման համար հիմք են ծառայել հողվածում կատարված գիտական բնույթի հոգեբանական հետազոտությունները, որոնք ցույց են տալիս, որ նման հանցանքներ կատարած անձինք չունեն ապրումակցման կարողություն, հետևաբար չեն կարող ունենալ անկեղծ զղջում:

Զուգահեռներ անցկացնելով համաձայնեցման և համագործակցության վարույթների հետ, որոնց կիրառման համար ևս անհրաժեշտ է, որ անձը չվիճարկի իրեն մեղսագրվող արարքը, գտնում ենք, որ մեղադրյալի կողմից իրեն մեղսագրվող արարքը չվիճարկելը չի կարող կրել բացարձակ բնույթ և անձը, գործուն զղջալով հանդերձ, կարող է վիճարկել գործում առկա ապացույցների թույլատրելիությունը, կամ մեղքն ընդունելով հանդերձ՝ համաձայն չլինել դիտավորության ձևի, շարժառիթների և որակման այլ նույր հարցերի հետ, որոնք չպետք է արգելք լինեն զղջման հիմքով անձին պատասխանատվությունից ազատելու հարցի քննարկման համար: Այսպիսի մոտեցման համար հիմք են հանդիսացել հիշյալ ինստիտուտների կիրառման նպատակային տարբերությունները: Ինչպես հողվածում է ցույց տրվել՝ գործուն զղջալը հատկապես ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների մասով չի կարող հետապնդել վարույթի բեռնաթափման կամ ռեսուրսների խնայողության նպատակ:

Օգտագործված իրավական ակտերի և գրականության ցանկ

1. «Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիա, Լանզարոտե, 25 հոկտեմբերի 2007 թ.:

Council of Europe Convention on the Protection of Children against Sexual Exploitation and Sexual Abuse, Lanzarote, 25.X.2007.

2. **Գրիգոր Նարեկացի**, Մատյան ողբերգության: «ՄՀՄ գրատուն», Եր., 2020:

G. Narekatsi, “The Book of Lamentations”, «MHM gratun» publishing house, Yerevan, 2020.

3. **Մխիթար Գոշ**, Դատաստանագիրք: Եր., 2001 թ.:

M. Gosh, “The Lawcode”, Yerevan, 2020.

4. **Թալեբ Ն.**, Սև կարապը: «Անտարես» հրատ, Եր., 2021:

Taleb N. The black swan. «Antares» publishing house, Yerevan, 2021.

5. **Ֆրանկ Կ.**, Կյանքին ասել այո: «Գրատուն» հրատ., Եր., 2022:

Frankl, V. “Say yes to life”, «Gratun» publishing house, Yerevan, 2022.

6. **Գոռվման Դ.**, Հուզական ինտելեկտ: «Զանգակ» հրատ., Եր., 2020:

Goleman D., “Emotional Intelligence”. «Zangak» publishing house, Yerevan, 2020.

7. **Ղուկասյան Հ., Մելոնյան Դ., Նիկողոսյան Ա.**, ՀՀ քր. դատ. նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանման գիտական ուղեցույց: Եվրոպայի խորհուրդ, հուլիս 2022:

Ghukasyan, H., Melkonyan, D., Nikoghosyan, A. “Conceptual solutions, innovative approaches and key institutions practical guide to interpretation of the new Criminal Procedure Code of RA”. «Council of Europe» july 2022.

8. **Պետրոսյան Վ.**, «Իմ կիսատ թողած երգը»:

Petrosyan V., “My unfinished song”,

<https://www.youtube.com/watch?v=sSCoLNN-a6>

9. **Martin L. Hoffman**, «Empathy, Social Cognition, and Moral Action» in W. Kurtines and J.Gerwitz, eds., Moral Behavior and Development: Advances in Theory, Reserch, and Applications /New York: John Wiley and Sons, 1984/.

10.**Michael M. O'Hear**, Remorse, Cooperation, and "Acceptance of Responsibility": The Structure, Implementation, and Reform of Section 3E1.1 of the Federal Sentencing Guidelines,

<https://scholarship.law.marquette.edu/cgi/viewcontent.cgi?referer=&httpsredir=1&article=1278&context=facpub>

11. **Duncan, M.G.** Emory University School of law, SO YOUNG AND SO UNTENDER. Remorseless Children and the Expectations of the Law.

12. Matthew 26:75. According to The Interpreter’s Bible, Peter “was wiser than Judas; hewept, made confession, and found peace. . . . He became a ‘rock’ in very fact.” 7 TheInterpreter’s Bible 590 (1979).

13. <https://www.e-draft.am/projects/5416/justification>

14. http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=29&dt=HY_HY&query=%D5%A6%D5%B2%D5%BB%D5%A1%D5%AC

15. <https://surbzoravor.am/post/view/apashkharhutyun>

ОСВОБОЖДЕНИЕ ОТ УГОЛОВНОЙ ОТВЕТСТВЕННОСТИ ЛИЦ, СОВЕРШИВШИХ ТЯЖКИЕ И ОСОБО ТЯЖКИЕ ПРЕСТУПЛЕНИЯ НА ОСНОВАНИИ ДЕЯТЕЛЬНОГО РАСКАЯНИЯ: УЖАСНАЯ РЕАЛЬНОСТЬ ИЛИ БИБЛЕЙСКАЯ МУДРОСТЬ?

Аннотация

Статья посвящена изучению регулирований освобождения лиц от уголовной ответственности на основании деятельного раскаяния.

Принимая во внимание, что статья 81 Уголовного кодекса РА была дополнена частью 1.1, согласно которой лица, совершившие тяжкие и особо тяжкие преступления, также могут быть освобождены от ответственности на основании деятельного раскаяния, данный институт стал предметом изучения раскаяния в правовых, духовных и психологических аспектах.

В статье раскрыта суть принципа фальсификации как методики, подтверждающей реальность раскаяния. Выделены парадигмы раскаяния и сотрудничества как модели, подтверждающие действенность раскаяния в преступлениях небольшой и средней тяжести, а также в тяжких и особо тяжких преступлениях. Особое внимание было уделено духовным и психологическим аспектам раскаяния. Изучив научные исследования, была предпринята попытка показать, что часть 1.2 статьи 81 Уголовного кодекса РА необходимо дополнить такими видами преступлений, как преступления против половой неприкосновенности, половой свободы и траффикинг детей.

Ключевые слова: деятельное раскаяние, принцип фальсификации, парадигма раскаяния, парадигма сотрудничества, сопереживания.

1(118)2025

◆ ՏԵՄԱԿԻՆԻ

◆ ՄԱՍԻՍԻԱՆԻ ԴԱՏԱՐԱՆ

EXEMPTION FROM CRIMINAL LIABILITY OF PERSONS WHO HAVE COMMITTED GRAVE AND PARTICULARLY GRAVE CRIMINAL OFFENCES DUE TO ACTIVE REMORSE: HORRIBLE REALITY OR BIBLICAL DEPTH?

Annotation

The article is dedicated to the study of the regulations for releasing persons from liability due to “active remorse”.

Bearing in mind that Article 81 of the RA Criminal Code was supplemented with part 1.1 under the Law HO-273-N of 12.07.23, according to which persons having committed grave and particularly grave criminal offences may be released from responsibility due to active remorse, this institution has become the subject of study in legal, spiritual and psychological aspects of remorse.

The article reveals the essence of the falsification principle as a methodology verifying the genuineness of remorse. The paradigms of remorse and cooperation have been singled out as models confirming the effectiveness of remorse in criminal offences of minor or medium gravity, as well grave and particularly grave criminal offences. Particular emphasis was placed on the spiritual and psychological aspects of remorse. Through the study of scientific research, an attempt was made to show that part 1.2 of Article 81 of the RA Criminal Code needs to be supplemented with a number of crimes, such as crimes against sexual freedom and sexual immunity, and child trafficking.

Keywords: active remorse, falsification principle, repentance /remorse/ paradigm, cooperation paradigm, empathy.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 03.03.2025 թ., տրվել է գրախոսության 11.03.2025 թ., ընդունվել է տպագրության 21.03.2025 թ.: